

***«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային առաջարկի շրջանակում
բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի կիրառման կարգը***

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 21.06.2011թ. դրությամբ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետերերի ռեեստրում գրանցված բաժնետերերը:

Բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերը կարող է մինչև հոկտեմբերի 3-ը «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ուղղարկել նախապատվության իրավունքից օգտվելու մասին գրավոր ծանուցում: Ծանուցումը կարող է ներկայացվել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի գրասենյակ (հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան փողոց 25ա, հեռախոս՝ (047) 97 42 14, (097) 27 71 17, Էլ. փոստ՝ artsakhhek@mail.ru, www.artsakhhepp.com), «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակ (Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10), փոստի կամ կապի այլ միջոցով կամ առձեռն:

Բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնվորող փաստաթուղթը պետք է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ին ներկայացվի նախապատվության իրավունքից օգտվելու մասին գրավոր ծանուցման հետ միասին, բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 3-ը: Բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարումը պետք է կատարվի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 2500036910046100 բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից կարող է չընդունվել բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցումը և չբավարարել նշված ծանուցմամբ նախատեսված գործարքը, եթե ծանուցումը.

- ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք (այդ թվում՝ բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը),
- թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին,
- ներկայացվել է նախապատվության իրավունքի կիրառման նախատեսված ժամկետի ավարտից հետո:

Ծանուցման չընդունման դեպքում Բաժնետերը կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները (անճշտությունները), իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետիրոջ կողմից վճարված դրամական միջոցները մինչև հոկտեմբերի 8-ը ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով՝ ծանուցման մեջ նշված բանկային ռեկվիզիտներով կամ գրավոր դիմումի հիման վրա Բանկի գրասենյակից՝ կանխիկ եղանակով:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցման չընդունման և նշված ծանուցման հիման վրա գործարքի չկատարման դեպքում Բաժնետերը կարող է մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը:

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է՝ ելնելով Բաժնետերերին պատականող բաժնետոմսերի քանակից: Եթե նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում Բաժնետիրոջ հասանելիք բաժնետոմսերի թիվը կոտորակային է, ապա այն կորացվում միավորի ճշտությամբ (մինչև 0.5-ը դեպի ներքև, իսկ 0.5 և ավելին դեպի վեր), իսկ եթե մեկից փոքր է ստացվում, ապա նրան տրամադրվում է մեկ բաժնետոմս ձեռք բերելու նախապատվության իրավունք:

Եթե ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է Բաժնետիրոջը հասանելիք քանակից, ապա այն ենթակա է բավարարման հասանելիք առավելագույն քանակով, իսկ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կամ կապ հաստատել.